

Կարաբեկյան Սամվել, Տոնիկյան Սոնա, Գրական արաբերենի ներածական դասընթաց, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2014, 255 էջ:

ԵՊՀ դոցենտներ Բ.Գ.Թ. Սամվել Կարաբեկյանի և Բ.Գ.Թ. Սոնա Տոնիկյանի «Գրական արաբերենի ներածական դասընթաց»-ը արաբերենի խորթին քերականական համակարգին ու հարուստ բառապաշարին հայալեզու լսարանին ծանոթացնելուն ուղղված ձեռնարկ է: Այն իր ուրույն տեղն է զբաղեցնում վերջին շրջանում համաշխարհային արաբագիտական դպրոցի ուշադրությունը գրաված օտարալեզու լսարանին ուղղված նմանատիպ դասագրքերի շարքում, շահեկանորեն տարբերվելով մյուսներից: Լինելով մոսկովյան արաբագիտության լավագույն դպրոցներից մեկի՝ գաբուչանական (ՌԴ Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտի արաբագիտության բաժնի վարիչ, անվանի հայագրի արաբագետ լեզվաբան Հրայր Գաբուչյանի անունը կրող) դպրոցի մոտեցումները որդեգրած դասընթացի տիպար, այն նպատակ է հետապնդում ունկնդրին ծանոթացնել առաջին հերթին արաբերենի ամենահիմնական, այսպես կոչված բազիսային հասկացությունների և կատեգորիաների հետ, առանց որոնց արևելյան այս լեզվի և նրա հետ կապված ողջ պատմամշակութային շերտի հետագա յուրացումը գրեթե անհնար է:

Միևնույն ժամանակ դասագիրքը բացարձակապես արխայիկ չէ. նրանում հաշվի են առնված արաբերենի, արաբամուսուլմանական քաղաքակրթության արդի իրողությունները, նույնիսկ գլոբալացման ազդեցության տակ ներկայումս տեղի ունեցող զանազան համակարգային փոխակերպումները: Այն չի կենտրոնանում միայն դարերի ընթացքում կաղա-

պարված կառույցների ուսումնասիրության վրա, այլև հաշվի է առնում լեզվի դիսամիկ զարգացման փուլերը: Նրանում օգտագործվող թե՛ քերականական հենքը, և թե՛ բառապաշարը այսօրվա արաբական երկրներում կիրառվող նորմատիվ գրական լեզվի արտացոլումն է:

Դասագիրքը բաղկացած է թվով քսանհինգ բաժիններից՝ դասերից, ինչպես նաև բառարանից: Բառարանում տրված են այն բոլոր բառային միավորները, որոնք օգտագործվում են ձեռնարկում՝ քերականական նյութը մատուցելու ընթացքում: Ինչ վերաբերում է բուն դասընթացին, ապա առաջին իսկ դասից սկսած ուսանողին աստիճանաբար ներքաշում են արաբական քերականական առաձևահատկությունները ճիշտ ընկալելու համար ընտրված մեթոդապես այնպիսի մթնոլորտ, որը հնարավոր է դարձնում ավելի դյուրին կերպով ընկալել դասընթացի քայլ առ քայլ բարդացող նյութը: Տրվում են նվազագույն միավորների հասկացությունները, ապա՝ նրանց վրա կառուցվում են հնչունական կազմի ու ձևույթների առանձնահատկությունները ներկայացնող լեզվական նյութը: Նույն մեթոդաբանական տրամաբանությամբ մատուցվում է նաև բառապաշարը, որի բարդացումը թելադրվում է քերականական նյութի բարդացմամբ, այլ ոչ՝ հակառակը: Քերականական նյութը լավագույնս յուրացնելու համար տրվող տեքստային սեզմենտը բավական հետաքրքրաշարժ է և արտացոլում է արաբական կենցաղային զանազան դրվագներ:

Դասընթացի բոլոր 25 դասը յուրացնելու դեպքում ենթադրվում է, որ ունկնդիրը կունենա բավականաչափ քերականական պատրաստվածությունն ու բառապաշար, որ ինքնուրույն կարողանա կազմել դեռևս ոչ այդքան բարդացված, սակայն արդի գրական արաբերենում ընդունված նորմերին

համապատասխան նախադասություններ, կարդալ դասընթացի բառապաշարի վրա հիմնված տեքստեր, շարադրել սեփական մտքերը և հիմնականում հասկանալ նույն մակարդակում գտնվող ունկնդրի բանավոր խոսքը:

Դասընթացը հաշվարկված է համալսարանական կրթության 1-ին տարվա առաջին կիսամյակի համար և ամբողջովին բավարարում է ուսումնառության այս փուլում ուսանողի առջև դրվող պահանջներին:

Արսեն Առաքելյան

Բ.Գ.Թ.